ARMENIA Journal. en langue Arménienne fondé à MARSEILLE en 1885

ԱՐՄԱՆԻԱ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամբողջ 31րդ տարեշրջանի (1915 օգոստոս–1916 յուլիս) բաժնորդագինն է 20 ֆրանգ. Թիւրքիայի և Պարսկաստանի համար 10 ֆրանգ, կանխիկ: Ամսական բաժնորդագինն է 2 ֆրանգ. Թիւրքիայի և Պարսկաստանի համար 1 ֆրանգ.: Նամակ կամ դրամ ղրկել այս հասցէով.

M. PORTOUKALIAN
Directeur du journal *Armenia*
MARSEILLE (France)

ԼԱ ՏԱՐԻ
ԹԻՒՆ Ը

1915 ՕԳՈՍՏՈՍ 4 Ի.
(Հ.Տ. 1915 Յուլիս 22)

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Խմբագրութիւնը եթէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւնները: Պարտաւոր չէ վերադարձնելու չհրատարակուած ձեռագիրները:

Ծանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով:

Ծանուցման 1 միլիկ գիրը 1 սանդիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանդիմ:

Les annonces en français et en arménien sont reçues au bureau de la Rédaction : Place Alexandre-Labadié ,17

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ "ԱՐՄԷՆԻԱ„Ի ԼԱ ՏԱՐԵՇՐՋԱՆԻՆ

(1915 ՕԳՈՍՏՈՍ — 1916 ՅՈՒԼԻՍ

Ամբողջ 31րդ տարեշրջանի (1915 օգոստոս–1916 յուլիս) բաժնորդագինն է 20 ֆրանգ (4 ոսկի արծրիկեան կամ 7 րուբլի և 50 կոպ. ռուսական) ամէն տեղի համար, ի բաց առեալ Թիւրքիան և Պարսկաստանը, ուր կը ղրկուի կէս բաժնորդագնով, այսինքն ամբողջ տարեշրջանի համար 10 ֆրանգ բաժնորդագնով կարելի է բաժնորդագրուիլ նաև քանի՛ ամսի համար որ ուզուի, ամսական 2 ֆրանգ (40 սէնթ=75 կոպ.) հաշուելով, կամ 1 ֆրանգ Թիւրքիայի և Պարսկաստանի համար:

Յայտնի է արդէն թէ անանք որ «Արմէնիայի Օժանդակ» արձանագրուած են մեր հրատարակած Օժանդակութեան կանոնագրին համեմատ, իրաւունք կունենան Արմենիա առնելու, քանի՛ անձի համար որ ուզեն, իրենց առնած լրագրի ծրարին մէջ դրուելով և կէս բաժնորդագնով, այսինքն ամբողջ չրջանին համար 10 ֆրանգով կամ ամսական 1 ֆրանկով. կարելի է նաև Օժանդակի նշանակած բաժնորդի հասցէին ուղղակի ղրկել թերթը, 12½ ֆր. (2½ ոսկի) բաժնորդագնով:

Մ. ՓՈՐԹՈՒԿԱԼԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

	ֆր. սնդմ.
Ս. Հայ գիւղացուհի մը Բ. տպագր.	,40
Բ. — Է. (Սպառած)	
Ը. Թիւրքիայի Հայերն եւ իրենց դրացիները (Գրեց Մ. Աբեղեան)	,50
Թ. «Արմենիա»ի յուշարար (Ա. տարի)	1,40
Ժ. Վրէժ	,20
ԺԱ. Թամաս Բացարիս	,20
ԺԲ. Նմոյշներ Մ. Փորթուգալեան ի գրած ուսանաւորներէն	,15
Ժ. Մի պատիւար հայրենասէր (Պուլկարիոյ Ցեղասպանութեան Ծագմանպատմութիւնը)	1,40
ԺԴ. Մի՛ գաղթիք	,20

Մարեկլէն դարս ղրկելու փոստի ծախքը կը վճարուի հրատարակչէն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ամբէնիայի 31րդ տարեշրջանին առթով. — Նամակ Հայաստանէն (Վան). — Մաղթանք վանի գրաւման առթով. — Ի յիշատակ՝ Հայրենիքի ազատութեան համար պատերազմի մէջ ընկած կամաւոր Հայ զինուորաց. — 7 Հայեր նորէն կախաւած Կ.-պոլսի մէջ. — Ալ եւս վրէժը կը մնայ. — Ռուսիոյ պետական Դուման եւ Սազօնօֆի ճառը. — Հայերը Հարաւային Ամերիկայի մէջ. — Տեղական. — Մեծ հրդեհ Կ.-պոլսի մէջ. — Իտալեւթիւրք յարաբերութիւնները. — Միդիլէնի գրաւումը. — «Մարեէյէզ ի հեղինակի աճիւնները էնվալիտ փոխադրուելուն առթով Տ. Փուանքարէի իսօսած ճառը. — Ծանուցումներ:

«ԱՐՄԷՆԻԱ»Ի 31ՐԴ ՏԱՐԵՇՐՋԱՆԻՆ ԱՌԹՈՎ

Այս թուով կը սկսի Ամբէնիայի 31րդ նոր տարեշրջանը:

Եւրոպայի մէջ հայերէն լրագրի մը 30 տարի կեանք ունենալը ապացոյց մը կրնայ նկատուիլ եւրոպացնակ Հայերի այժմեան մեծաւոր յառաջդիմութեան, ազգային զգացումի զարգացման և յարատեւող ոգիին: Ասկէ առաջ Եւրոպայի մէջ հայերէն լրագրի մը հրատարակութեան քանիցս փորձեր եղած էին, և շատ կարող անձերի ձեռքով, բայց անյաջողութեան դատապարտուած և չատ կարճատև կեանք մը միայն ունեցած էին:

30 տարիի մէջ երեան կուգայ ամբողջ նոր սերունդ մը: Թէև մենք ո՛չ սովորութիւն, ո՛չ ալ պէտք ունինք ապերգութիւններին կրկնելու և յիշեցնելու Ամբէնիայի սկզբունքները, անոր ուղղութիւնը և այդ ուղղութեամբ մատուցած ծառայութիւնները, բայց իր 30 տարին լրացնելուն առթով՝ նորերին համար որոնք չեն կրցած ճանչնալ զինք սկզբէն ի վեր, ուելորդ չենք համարիր մէկ երկու տողով դէթ ուրուագծել այստեղ անոր ուղղութիւնը:

Ամբէնիան հայ հայրենասիրական նպատակ ունեցած է: իր ուղղութիւն, իր ձգտումներ, իր դրութիւններ ու իր գործունէութիւն նուիրուած են այդ նպատակի հասնելու:

Իր ընթերցողներուն այդ ուղղութեամբ մատուր պաշար և պարզագոյժ տալու համար՝ հայ հայրենիքի վիճակին և անոր հետ կապ ունեցող խնդիրներուն վրայ լուրեր, տեղեկութիւններ տալու աշխատած է, արտասահմանի հայերին և Հայաստանի հայերին միջև յարակցութեան կապ մը դառնալ ջանացած է, Հայաստանի ազատութեան ազդակ ցոյց տրուած է ոչ միայն մատուր զարգացումը այլ և յեղափոխական գործը, որի համար պատրաստութեան, ներքին այժ գոյացնելու անհրաժեշտ պէտքը ցոյց տուած է: Այդ այժ գոյացնելու համար մեզի պէս տակաւ տղդի մը մէջ՝ ամէն դատակարգերին իրենց անտարբերութիւն թողլով վիրաբան և համերաշխ գործելու յորդոր տուած է. հետեւապէս իր ծրագրի մէջ չէ ընդգրկած դատակարգային և ընկերվարական խընդիրներով զբաղիլը որոնք Հայաստանի խնդիրին հետ կապ չունին, դէթ գործունէութեան ներկայ շրջանին մէջ. Հարստութիւնը յանցանք մը չենք համարիր իրեն վրայ յարձակելու համար, ո՛չ ալ աղքատութիւնը առաքինութիւն մը. ինչպէս որ աղքատութիւնն ալ յանցանք մը չենք նկատեր, ո՛չ ալ հարստութիւնը ինքնին արժանիք մը: Մարդ ինչ վիճակի մէջ ալ գտնուի, իր գործն է որ կը բարձրացնէ իր արժանիքը և ոչ թէ իր դրամական վիճակը: Նիւթական կարողութիւն չունեցող Հայ մը՝ որ իր անձը կը նուիրէ Հայաստանի ազատութեան սուրբ գործին, մեզ համար չատ աւելի մեծ մարդ մ'է քան թէ այն հարուստ Հայը որ հապիւ կը հաճի իր վշրանքներէ նուիրել Ազգի ազատութեան սուրբ գործին: Ներկայիս մէջ Հայի մը մեծութեան չափանիշը իր հայրենասիրական եռանդն ու գործունէութիւնն է, ինչ դասակարգի և կուսակցութեան ալ պատկանի ինք: Մնացած բաները երկրորդական, երրորդական և այլն կարգի տեղեր կը բռնեն: Պէտք է օրինակ առնենք Ֆրանսայէն ուր ասկէ առաջ պանդխտական կուսակցութիւններ թէև կատաղաբար կը կռուէին իրար հետ, բայց այսօր, Հայրենիքի փրկութեան սրբոյ նպատակին առջև, ամէնէն պահպանողականը ու ամէնէն յեղափոխականը ձեռք ձեռքի տրուած կը գործեն:

Մեր նպատակը չլինելով մանրամասն գծել այսուհետ Ամբէնիայի ուղղութիւնը, որը ընդարձակօրէն ցոյց կուտան իր 30 տարիի հրատարակութիւնները ու գործունէութիւնը, վերադրկալ մի քանի տողերը բաւական կը համարինք:

Ամբէնիան երեսնամեայ չրջանի բոլորման առթով՝ քաղցր պարտք մը կը համարինք մեր ջերմ շնորհակալութիւններ յայտնել ամէն անոնց որոնք իրենց բաժնորդագրութեամբ կամ գրական աշխատակցութեամբ և կամ իրենց համակրութեան նեխ գրական ապացոյցով ալակցած են մեզ այս դժուարաւոր գործը 30 տարի չարունակելու:

Գիտենք որ Ամբէնիան աւելի օգտակար դարձնելու համար ինչ ինչ բարեփոխութիւններ պէտք է ընել: Բայց մենք արդէն ըրած ենք ինչ որ կըրնանք և աւելի քան որ կրնանք: Ասկէ աւելին ընելու միջոցներ և դիւրութիւններ պէտք են, որոնք ձեռք բերելու համար պէտք է ալակցին մեզ մեր համակիրները: Ցաճախ կը պատահի որ կարևոր յօդուածներ և լուրեր, մեր համբի հակառակ, տեղ չեն կրնար գտնել Ամբէնիայի փոքր դիրքին մէջ: կը խորհինք ընդարձակել անոր դիրքը, պատկ աւելցնելու բաժնորդագինը: Մեր այդ ծրագիրը իրագործելու համար՝ պէտք է որ գտնէ 400 բաժնորդ աւելի ունենանք. չէ՞ կարելի որ այս մասին ջանք մ'ընեն Ամբէնիայի ընկերուհիները համակիրներն ալ և աշխատին գոն տարածելու: Մենք իրենց աշխատանքի դիւրութիւն մը տուած լինելու համար, Ամբէնիայի այս թուով իրենց կը ղրկենք տրպագրուած պատրաստ նամակներ որ իրենց յատկապէս տեսած բարեկամներին և ծանօթներին ղրկեն, առաջարկելով որ իրենց բաժնորդագրութեամբ այժ տան Ամբէնիային: Այդ նամակներէն վերջ հարկ կը լինի միայն աւելցնել այն անձի անունը որին կուղղուի և տարագրել:

Հանրային գործերի յաջողութեան և արդիւնաւորման պէտք է որ հանրութիւնը ալակից։

Մ. Փ.

ՆԱՄԱԿ ՀԱՑԱՍՏԱՆԷՆ

Վան, 3/16 յունիս

Ռուս բանակը թէև առանց կուի գրաւեց Վանը, բայց նախ քան գրաւումը կռիւներ էր ունեցել Կավրէչանի, Բերկրի, Զէվէ և այլ քիւրդարնակ տեղերում. իսկ քաղաքիս գրաւումից յետոյ շարունակելով իր առաջխաղացութիւնը՝ կռիւներ ունեցաւ նահանգիս հարաւակողմում՝ Ոստան, Կաւաշ, Կարճկան և Նօրդուզ գաւառներում։ Այս լեռնային վայրերում և մանաւանդ Նօրդուզի լեռներումն էր ամրացել Վանից նահանջող թիւրք բանակը, որին միացաւ նաև Ատրպատականում գործող թիւրքական բանակը՝ հրամանատարութեամբ Էնվէր-փաշայի հօրեղբայր Խալիլ-բէյի, որ Պարսկաստանում ու Ազրակում Անդրանիկի դէմ կռւող թիւրք բանակի հետ ընդհարումներ ունենալուց ու պարտվելուց յետոյ՝ նահանջել էր մինչև Խոյ և այնտեղից էլ Նօրդուզ, ուր միացել էր Վանից նահանջած Զէվդէթ-բէյի բանակին։ Խալիլ-բէյի կօրպուսը վերջին ժամանակները հասել էր Պարսկաստան՝ Հալէպի ու Դիարբէքիրի վրայով չորս ամիս ճանապարհորդելուց յետոյ. բաւական ուժեղ բանակ էր նա, զօրաւոր թնդանօթներով, բայց ռուսաց բանակի հզորութեան առաջ տեղի տուից ու պարտվեց, չդադնելով այն յոյսը՝ որ նրա վրա դրել էին Զէօն-թիւրքերը, նրանով իրանում թափանցելու և իրանեան ժողովուրդները մեծ ջհադին մասնակից անելու նպատակով։

Թիւրք նահանջող բանակի հետ գանվում էին նաև Վանից փախչող թիւրք ու քիւրդ ժողովուրդներ ու նրանց ընտանիքները, յոյս ունենալով, որ թիւրք բանակի յաղթանակից յետոյ իրանք կրկին կը վերադառնան Վան, տէր դառնալու իրանց լքած կալուածներին. բայց թիւրք զօրքի իրար հետևից կրած պարտութեամբ այդ յոյսը ֆիասկո է կրել և ժողովուրդը պարատւորվել է էլ աւելի հեռանալ դէպի հարաւ՝ Մուսուլ, Սղերտ և այլն։ Միայն 1700 թիւրք կին ու աղաներ ապրում են այժմ քաղաքիս ամերիկեան ու գերմանական օրբանոցի չէնքերում ու կերակրվում են ռուս կառավարութեան հաշուով։ Զարմանալի են աշխարհի յեղաշրջումները. քիչ ժամանակ առաջ մի ամբողջ ամիս հայ ընտանիքներն էին ապաստանել այդ օտար գրօշակների հովանիում, յոյս ունենալով որ կոտորածը մինչև այնտեղ չի հասնի, իսկ այսօր իրանց կոտորող թիւրքերի ընտանիքներն են ապաւինել միևնոյն գրօշներին։

Սակայն եթէ չը լինէր մի սահմանադիր Զէվդէթ, իրերը այս աստիճան գահավիժում չէին ունենայ ու երկու կրօնի պատկանող ազգերի միջև թշնամութիւնը այս աստիճանի մեծութեան չէր հասնի. Դեռ անցեալ աշունքին էր, որ երբ ռուսաց բանակը Արպատականից մտաւ թիւրքական հողը ու գրաւեց Սարայը, շատ-շատ թիւրքեր դիմեցին իրանց բարեկամ հայերին և առաջարկեցին Վանը գրաւելու պարագայում իրանց ու ընտանիքներին հայերի տներում ընդունել ու պահպանել, մինչև երկրամասի նօրմալ վիճակ հաստատվելը, խոստանալով փոխադարձաբար նոյնպիսի պահպանութիւն անել իրանց կողմից հայերին, եթէ երբէք քիւրդերի կամ կառավարութեան կողմից նրանց չարիք հասնի. Հայերը ընդունեցին այդ առաջարկը, չը նայած որ 96ի կոտորածներից մեծ չարիքներ էին տեսել նրանցից, ջարդ, հրդեհում, թալան, առևանգում և այլն. հայերը այդ արդէն մոռացել էին. բայց Զէվդէթը փոխեց թիւրքերի միտքը ու ներշնչեց նրանց ոտկալի ֆանատիկ զգացումները՝ գրգռելով նախապէս նրանց ընչաքաղցութեան, թալանիչի ախորժակները. Նա ասել էր՝ «սպանեցէք հայերին, ու երկիրը և նրա ամբողջ հարստութիւնը ձերն է լինելու, թէկուզ երկիրն էլ գրաւվելու լինի ռուսներից»։ Նա հաւատացել էր, որ 24 ժամում կամ մի քանի օրում վերջացրած կը լինի հայութիւնը վաստրականում. հաշի չէր առել նա հայերի դիմադրական ոյժը, արժէք չէր տուել նրան, մինչդեռ միամտայ յոյսառ կռիւը հիասթափեցրեց նրան, գոյց տալով որ հայերը այնչափ էլ արհամարհելի ոյժ չեն։

Զէվդէթը ասել էր՝ «Այս երկիրը լինելու է կամ իսլամին կամ քրիստոնէին»։ Եւ եղաւ վերջինը, հակառակ իր յանկութեան։

Այժմ ամբողջ Վանի վիլայէթը գրաւվել է, բացի Կարճկանի մի փոքր մասից, այդ էլ այսօրվայ վաղվայ հարց է միայն, ու բանակը շարժվում է դէպի Բիթլիս՝ Դատվանի ու Ալաշկերտի դաշտերով։ Ատրպատականի հայ կամաւորական խումբն էլ Ատրպատականից յետոյ Ազրակում ու Նօրդուզում փառաւոր յաղթանակներ շահած, մտնում է այսօր քաղաք՝ մի փոքր ժամանակ հանգիստ անելու։

Առ այժմ երկրում մնացել են գրեթէ միայն հայ, ասորի և եզիդի ժողովուրդներ, նրանք էլ, ի հարկէ, կոտորակված. քիւրդեր ու թիւրքեր էլ տեղ-տեղ կան թագնված լեռներում, որոնք երբեմն ցած են իջնում լեռներից և խաղաղ քնակչութեան վրա յարձակվում. այդ պատճառով հեռաւոր գաւառների մէջ քնակչութիւնն այնչափ էլ վստահելի չէ։ Այնպէս շաբթում քաղաքացի ուժեղ մարտիկներից մին, Աւօն, իր որդի և շորս ուրիշ ընկերների հետ Աբաղա են գնում իրանց անձնական գործերի համար, բայց սպանվում են անակնկալ յարձակումից։

Հայ գիւղերից ծնացած բեկորները տակաւ առ տակաւ հաւաքվում են իրանց աւերված գիւղերում և սկսում են իրանց երկրագործական պարապմունքները, թէև չատ-չատերին պակասում են անասուններ, գութան, սայլ և ուրիշ գործիքներ։ Քիւրդերը երկրից հեռանալիս թողել են մանաւանդ Նօրդուզում մեծ քանակութեամբ եզներ, գոմէշ, ուչխար և ուրիշ անասուններ, որոնք եթէ խելացի կերպով բաժանվեն թալանված գիւղացիների վրա, նրանց անհեսութիւնը բաւական կը բարւոքվի։ Ցանկալի է, որ լինէր մի յանձնաժողով այդ կարգադրութիւնը անելու և չը թողնելու, որ ուժեղը միայն օգտվի ի վնաս տկարին, իսկ թէ ո՞վ է հոգս տանելու, կամ ո՞վ, ո՞ր բաղուկը պիտի աշխատէ այն ընտանիքների համար, ո՞վ նրանց արտերը պիտի վարէ, չրէ, հնձէ և ուրիշ աշխատութիւնները պիտի կատարէ, որոնց մէջ գործող բազուկ, այր մարդ բնաւ չի մնացել, թէև տիկ. Մ. Տիգրանեանի նախաձեռնութեամբ կազմվել է մի կանանց միութիւն՝ պատերազմից վնասվածներին օգնութիւն հասցնելու նպատակով և որոշել է առ այժմ մի թէյարան բաց անել քաղաքումս նրանից ստացած օգուտը այդ ու վիրաւորվածներին գործածելու գործին յանձնելու համար. չատով բաց անելու է նաև մի հիւանդանոց, բայց մինչև այդ բաւական է։

Մի չաբաթ առաջ Վան է եկել Սիրական Տիգրանեան և իբրև խորհրդական օգնում է Արամին. իսկ երեկ էլ հասաւ Սահակ արքեպ. Սվաճեան, իբրև ներկայացուցչվիճ. Հայրապետի. սրբազանի պաշտօնը լինելու է անշուշտ ազգային ներքին կեանքը կազմակերպել։ Այս մասին աւելի մանրամասն տեղեկութիւն կը գրեմ յաջորդ անգամ։ Սրբազանի հետ եկել են նաև Եղբայրական Օգնութեան կողմից բժիշկներ ու ֆելդշէրներ — բժ. Թաշճեան և ընկերները — հիւանդներին և վիրաւորներին պէտք եղած օգնութիւնը անելու նպատակով. արդէն ժողովրդի մէջ ճարակում են տիֆ և ուրիշ տեսակ հիւանդութիւններ, իսկ մանուկների մէջ կարմրուկ. ուստի և բժշկական օգնութեան կարիքը խիստ մեծ է։

ՄՏՐԱԿ

(Մշակ)

ՄԱՂԹԱՆՔ ՎԱՆԻ ԴՐԱՄԱՄԱՆ ԱՌԹՈՎ

Էջմիածնի Արարատէն.

«Մայիսի 9ի առաւօտեան լուր առացվեց, որ ռուս քաղաքապետ գնդապետ Ալեքսանդրովը և հայ կամաւորները գրաւել են Վանը։ Շատով այդ մասին առացվեց պաշտօնական հեռագրեր։ Ըստ տեղական աղբիւրների՝ Վանի գրաւման տեղեկութիւնը հասել է Ալեքսանդրովին Ալաշկերտի դաշտում, ուր նա ռուսական զգացմունքներով մարդիկ միմեանց շնորհաւորում էին։ Ու այդ հասկանալի է. չէ՞ որ հայաշատ պատմական վան քաղաքը դարերով թիւրքի բռնակալ լծի տակից վերջապէս ազատվեց։ Վեհափառի հրամանով միւս օրը, մայիսի 10ին, Հոգեգալստեան օրը, պատարագից յետոյ կատարվեց կայսերական գոհաբանական մաղթանք։ Մաղթանքի ատենքը կարդաց Աչոտ եպիսկոպոսը։ Տաճարի ներսն ու դուրսը լի էր ազօթողներով, թէ չրիսկայ և թէ տեղական ժողովուրդը չատպել էր մասնակից լինել այդ ուրախութեան և ազօթելու առ Աստուած ռուս քաջարի զօրքի համար։ Մաղթանքից յետոյ վեհափառ Հայրապետը շրջապատված միաբաններով դուրս եկաւ տաճարից։ Անվերջ կեցցէներով թնդաց օդը։ Վեհափառը միաբանների հետ բարձրացաւ վեհարան։ Ժողովրդի խումն մեծ բազմութիւնը տեղ բռնեց վեհարանի բակում։ Տեղական երեք խումբ երգեցողները նուագում էին։ Ժողովրդի ուրախութիւնն իր գագաթնակէտին էր հասել։ Վեհափառը պատշգամբից դառնալով ժողովրդին խիստ զգացված խօսեց, բարեմաղթութիւններ արաւ Նորին կայսերական Մեծութեան և Օգոստափառ Տան կենաց, կովկասի փոխարքայի առողջութեան, ռուս քաջարի զօրքին կարողութիւն և յաղթանակ չնորհելու և հայ անձնուէր կամաւորներին աջողութիւն բաշխելու համար։ Ապա ժողովուրդը հեղհեղուկ սկսեց երգել ուրախ տրամադրութեամբ։

Ամբողջ միաբանութիւնը, երեւանից եկած հիւրերը՝ գլխաւորութեամբ Խորէն եպիսկոպոսի՝ ներկայանալով վեհափառին՝ չնորհաւորեցին վանի գրաւման առիթով և համբուրելով Հոգևոր Տիրոջ աջը՝ առացան նրա օրհնութիւնը։

Ի ՕԳՏՈՒՏ ՀԱՅՐԵՆԻՔԻ

Հայրենիքի ազատութեան համար պատերազմի մէջ ընկած կամաւոր հայ զինուորաց

Մեր Հայրենեաց քաջ զաւակներ,
Ոտքի եւած կամաւորներ.
Ձեր սուրբ արիւն սիրայօժար
Ի պոհ տուիք խիստ կամակար.
Ձեր յիշատակ օրհնեալ լինի
Ի պատմութեան Հայաստանի։
Կեանքի, մահու մէջ օրերու,
Դուք զոհուեցաք ապառնու
Անկեալ երկիր մեր Հայկազանց,
Աբեամբ ներկեալ նահատակաց.
Ձեր յիշատակ գովեալ լինի
Ի պատմութեան Հայոց Ազգի։
Ամենայն Հայ է պարտական
Ձիշատակ ձեր անմահական
Միշտ սուրբ պահել և անմոռաց,
Անէծք կարդալ անգութ Թրքաց.

զգացմունքներով մարդիկ միմեանց շնորհաւորում էին։ Ու այդ հասկանալի է. չէ՞ որ հայաշատ պատմական վան քաղաքը դարերով թիւրքի բռնակալ լծի տակից վերջապէս ազատվեց։ Վեհափառի հրամանով միւս օրը, մայիսի 10ին, Հոգեգալստեան օրը, պատարագից յետոյ կատարվեց կայսերական գոհաբանական մաղթանք։ Մաղթանքի ատենքը կարդաց Աչոտ եպիսկոպոսը։ Տաճարի ներսն ու դուրսը լի էր ազօթողներով, թէ չրիսկայ և թէ տեղական ժողովուրդը չատպել էր մասնակից լինել այդ ուրախութեան և ազօթելու առ Աստուած ռուս քաջարի զօրքի համար։ Մաղթանքից յետոյ վեհափառ Հայրապետը շրջապատված միաբաններով դուրս եկաւ տաճարից։ Անվերջ կեցցէներով թնդաց օդը։ Վեհափառը միաբանների հետ բարձրացաւ վեհարան։ Ժողովրդի խումն մեծ բազմութիւնը տեղ բռնեց վեհարանի բակում։ Տեղական երեք խումբ երգեցողները նուագում էին։ Ժողովրդի ուրախութիւնն իր գագաթնակէտին էր հասել։ Վեհափառը պատշգամբից դառնալով ժողովրդին խիստ զգացված խօսեց, բարեմաղթութիւններ արաւ Նորին կայսերական Մեծութեան և Օգոստափառ Տան կենաց, կովկասի փոխարքայի առողջութեան, ռուս քաջարի զօրքին կարողութիւն և յաղթանակ չնորհելու և հայ անձնուէր կամաւորներին աջողութիւն բաշխելու համար։ Ապա ժողովուրդը հեղհեղուկ սկսեց երգել ուրախ տրամադրութեամբ։

Ամբողջ միաբանութիւնը, երեւանից եկած հիւրերը՝ գլխաւորութեամբ Խորէն եպիսկոպոսի՝ ներկայանալով վեհափառին՝ չնորհաւորեցին վանի գրաւման առիթով և համբուրելով Հոգևոր Տիրոջ աջը՝ առացան նրա օրհնութիւնը։

Ջեր յիշատակ դարաւորեալ
Լինի յաւէտ փառաւորեալ։

ԲԱՋԱԼԵՐ

Մէն մի կաթիլ Ձեր սուրբ արեանց
Թափեալ յերկիր մեր դիւցազանց
Թո՛ղ ներշնչէ յոյս անվհատ
Ամեն Հայու որ յուսահատ.
Հայե՛ր, օգնենք մենք իրարու,
Ժամն է պատեհ և յուսատու։
Դադումն ասոեղ յԱբևելից
Պիտի փայլի խիստ բերկրալից,
Սուր և հրացան ու կախաղան
Ջուր կապտանան որպէսց Հայկեան.
Հայե՛ր, լինիմք միշտ միաբան,
Մեր թշնամիք թո՛ղ յար սոսկան։
Կալաց քաղքէն անցեալ օրեր
Դարձեալ նորէն կամաւորներ
Կավմուեցան ու մեկնեցան
Ի ռուսական սահման անցան.
Հայե՛ր, օգնենք մենք իրարու
Ժամն է պատեհ և պտղատու։
Անագորոյն թրքաց զօրքեր
Կրկին մտան մեր Հայ դիւղեր,
Այրեն, ձախէն տուին ջարդեր,
Մեծնայն ինչ եղան աւեր.
Հայե՛ր, օգնենք միշտ իրարու
Ի մխիթար Հայ որբերու։
Մանուկ կուլայ, մայր կարտասուէ,
Եւ չգիտէ առ ո՛վ դիմէ,
Աչքն թարթէ յերկնից կամար,
Մնկէ յուսայ իւր ցաւին ճար.
Հայե՛ր, օգնենք մենք իրարու
Ի մխիթար այրիներու։
Քանի՛ հազար արիւն անմեղ
Թրջեց երկիր իբրև հեղեղ.
Յուսանք յերկինս, դարձեալ յերկրի,
Տունըն Հայկայ պիտի կանգնի.
Հայե՛ր, օգնենք միշտ իրարու,
Ժամն է պատեհ և պտղատու։
Մենայն Հայ ուր որ լինի,
Պարտի չարժիլ ինքն իւրմէ.
Նայէ՛ երկինք Հայաստանի,
Մ՚րտէս առած գոյն բոսորի։
Հայեր, օգնենք մենք իրարու,
Ժամն է պատեհ և արտատու։
Դարեր անցան միշտ արիւնոտ,
Մենք չտեսանք սիրտ մը գթոտ,
Մ՚է բառական այսչափ արիւն,
Ո՛վ Եւրոպա, գթա՛ Հայուն.
Քանի՛ երդող դար լուտուր
Թո՛ղ խորտակէ լուծ դարաւոր։
Հայե՛ր, գործենք միշտ անվհեր
Եւ չլինիմք դասալիքներ.
Յոսկուժ աղդդն է միշտ յաղթող,
Ցամենայն գործս վայելատակող.
Ա. ըդարութիւն եւ դարուս լոյս
Պիտ՚ պսակեն մեր տաճած յոյս։

Մ. Կ. ՄԻՐԱԽՈՐԵԱՆ

2/15 յուլիս 1915
Ֆօքչան (Ռումանիա)

7 ՀԱՅԵՐ ՆՈՐԻՆ ԿԱԽՈՒՄԱԾ Կ.ՊՕԼՍԻ ՄԷՋ

Աթէնքէն արուած հեռագիր մը, Կ.պօլսի հրգհէն վրայ մի քանի խօսք ըսելէ յետոյ, կը յարէ թէ Հայ Գամիդէի անգամներէն 7ը մահուպատժուեցան Կ.պօլսի մէջ, իբր դաւաճան ամբաստանուած լինելով։ Շատ ուրշ չէ թէ իրենց վրայ եղած դաւաճանութեան ամբաստանութիւնը ի՛նչ բանի մէջ կը կայանար։

Թէ՛ Կ.պօլսի մէջ և թէ՛ դաւառները ամենաչնչին պատրուակները ըստեղծելով կառավարութիւնը կը ձերբակալէ, կը բանտարկէ, կը սպաննէ Հայերը։ Հայաստանի և կիլիկիոյ մէջ Հայ ժողովրդին արուած սոսկալի նեղութիւնները և կոտորածները ձինկիզխաններուն և Լենկթիմուրներուն թիւրքերուն այդ նախնիքներուն արարքները կը յիշեցնեն։ Ժամանակները փոխուած, բայց ցեղին բնաւորութիւնը չէ փոխուած։

ԱՑԼԵԻՍ ՎՐԷԺԸ ԿԸ ՄՆԱՑ

Ինչ ձեաց այլևս անկատար՝ դիւցազնական Հայաստանի տառապանքը նուիրագործելու համար։ Ա.րիւ՞նը. ան բարձրացաւ մինչև Ա.րարատի գագաթը։ Ա.րցո՞ւնքը. ան արդէն Սիփանն ալ նեժամացուց։

Ա.յո՛, տառապանքը կատարեալ է. բայց բան մը կայ անկատար, որ միշտ ալ պիտի ձեայ. կը հասկնաք, պիտի ձեայ անկատար. այդ՝ Հայաստանի մահն է։

Ա.յո՛, հիմա խարոյկները կը խնկարկեն՝ այնտեղ ինկող քաջերու և անմեղ նահատակներու յիշատակը. Եփրատը հազարաւոր հայ կիներու դիակները չալակած կը մռնչէ, իսկ Կիլիկիան իր ամայութիւններուն վրայ կարտասուէ։

Ա.յս էր անցեալը, այս եղաւ և ներկան։ իսկ ապագան գեղեցիկ յոյսերը հանգըստանող բան մը ըլլար կը թուի։

Բայց ամուր կա՛ց, Հայ ժողովուրդ, ամուր կա՛ց, Հայ հայրենիք. այսպէս կը պատգամեն քու ընտիր զաւակներդ որոնք հիմա թիւրքերէն կը քշուին նախիրներու պէս ո՛վ գիտէ ի՛նչպիսի դժոխքներ. ի՛նչ ցաւ. զաւակներդ կը քշուին նախիրներու պէս, խոշտանգուած կը բաժնուին քու արգաւանդ հողերէդ, և անհարազատներ կուգան գանոնք փոխարինել։ Բայց մի՛թէ չէ ըսուած որ քու զաւակներդ միայն կըբնանան անանիլ քու տիներէդ. իսկ անհարազատները կը թունաւորուին։ Ա.յո, պիտի թունաւորես անհարազատները որոնք քու մարմինդ ծակծկեցին։

Եւ դուն ամուր կա՛ց, հայ հայրենիք, որովհետև այսօր քու զաւակներդ ոչ միայն անասուններու պէս կը կոտորուին, այլև կը կոտորեն. արիւնի մէջ կը թաթախեն իրենց սուրը, իրենց դրիչը, որովհետև այլևս կզգան որ մինակ վրէժը կրնայ փրկել քեզ և արիւնը մայրն է վրէժին. իսկ արցունքի պէտք չունիս դու, որովհետև քու աւերակներուդ վրայ լացող բուերը շատ կան արդէն։

Անգամ մ՚ալ ամուր կա՛ց, Հայաստան, որովհետև քու խաչելութենէդ պոռթկացող վրէժի ձայնը կարձագանգէ ամենուրեք, կը տարածուի, կը մեծնայ ու կը դառնայ ահեղ բան մը, չանթահարող և հսկայ, որովհետև քու թշնամիդ յուսահատութեան բարբարոս ծայրայեղութեանը մէջ կը մաքառի, իսկ դուն զոհաբերութեան ծայրայեղութիւնովը կը մարանչիս։

Այս անգամ ևս ցոյց տուր քու հաստատամտութիւնդ և օրինակ հանդիսացիր կարգ մը այն թուլամորթ զաւակներուդ որոնք երջանիկ ինքնախաբէութեամբ մը կուզեն մոռնալ քեզ և չը լսել քու պարտաւորութեան հրաւիրող ձայնդ. կամ այն անսիրտ յուսահատներուն որոնք կաթիլ մը արցունք միայն ունին քու արիւնաթաթաւ հիշերուն ի պատասխան։

Այլևս քու զաւակներուդ սրտերը արիւնոտած են և վրէժը միայն կրնայ յադուրդ տալ անոնց ցասումին. այդ վրէժխնդրութիւնը մեծ է քու տառապանքիդ չափ և ամուր՝ քեզի չափ։

Այլևս վրէժը կը ձնայ փրկութեանդ համար և վա՛յ անոնց որոնք չը պիտի ուզեն ապրեցնել այդ վրէժը....

Թ. ԵՂԻՇԷ

ՌՈՒՍԻԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՆ ԵՒ ՍԱԶՈՆՕՖԻ ՃԱՌԸ

Ռուսիոյ Պետական Դուման բացուած է օգոստոս 1ին Պետրոգրադի մէջ և արտաքին գործերի նախարար Տ. Սազոնօֆ երկար ճառ մը խօսած է արտաքին քաղաքականութեան մասին, ուր Հայերի մասին հետևեալը ըսած է.

«Թիւրքերը զգալով փոթորկին մօտենալը, բացառիկ դժնեաթեամբ մը խոյացած են իրենց սիրատենչութեան ներքև տակաւին գտնուող քրիստոնեայ ժողովուրդներին վրայ. Հայերը ենթարկուեցան հալածանքների որոնք սակայն իրենք խորտակեցին, որովհետև Հայ կամաւորները քաջաբար կը կռուին մեզի հետ իրենց հարստահարողներին դէմ։ (Կեցցէներ եւ ծափահարութիւններ)։

Ա.յսպէս վան քաղաքը, որ մինչև իր ազատուիլը մեր զինուորների կողմէն՝ մօտ մէկ ամիս դիմադրած է, ենթարկուած էր ոչ նուազ սոսկալի հալածանքների թիւրքերի կողմէն։»

ՀԱՑԵՐԸ ՀԱՐԱՒ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՋ

ՍԱՆ ՖԱՒԼՕԷՆ յուլիս 5ին գրած են մեզ.

«Տեղւոյս փոքրաթիւ Հայ գաղութը անտարբեր չէ Թիւրքահայաստանի չարժման առջև։ Մինչեալ ամսոյ սկիզբը 150 անդ. ոսկի ղրկուեցաւ Լոնտոնի ռուսական դեսպանին, իր միջոցով Էջմիածին ղրկուելու համար։ Հայրապետին ղրկուելու համար։ Հանգանակութիւնը դեռ կը շարունակուի. մօտ օրեր կարևոր դումար մը ևս պիտի ղրկուի։

Տեղւոյս Հայութիւնը մեծ անձկանօք կը սպասէ Հայրենիքի ազատութեան աւետիսին և առ այդ կօգնէ նիւթապէս իր կարողութեան համաձայն, թէև մենք սակաւաթիւ ենք այստեղ։ Ունինք նաև երիտասարդներ որոնք տրամադիր են կամաւոր երթալ և անձնազոհութեամբ կըռուիլ Հայաստանի համար, սակայն միջոցներ և դիւրութիւններ կը պակսին։»

ՏԵՂԱԿԱՆ

Ուրախութեամբ կիմանանք որ Օրիորդ Շուշան-Հայկուհի Ե. ԿՈՒՐՊԵՏԵԱՆ (Մարսէյլի) մասնակցելով Ecole pratique de Commerce et d'Industrie de jeunes filles վարժարանն ընդունուելու մրցումին, յաջողած է ինք ալ ընդունուելիք աշակերտուհիներէ մին լինելու։ Այդ յաջողութեան դժուարութիւնը բացատրելու համար պէտք է աւելցնել որ վարժարանը 104 նոր աշակերտուհի միայն կրնայ ընդունիլ, մինչ մրցման մասնակցած էին 700ի չափ ընտրեալներ։ Ֆրանսահինները (այսինքն ֆրանսական երկրացինները) միայն կրնան ընդունուիլ այդ վարժարանը։

* * *

Թշնամի տէրութիւններէն հպատակներէն անոնք որ ներկայ պատերազմէն քիչ առաջ ֆրանսական երկրացի (citoyen français) եղած են, 1915 ապրիլ 7ի օրէնքին համեմատ իրենց ֆրանսացիութեան իրաւունքէն ինկած պիտի ճանչցուին եթէ այնպէս յարմար տեսնէ ֆրանսական կառավարութիւնը։ Իսկ անոնք որ նոր և մանրամասն քննութենէ մը յետոյ ֆրանսական կառավարութիւնը կը վերատուչ իրենց պատուոյ, հաւատարիմ և արժանիքի տէր անձնաւորութիւններ լինելը, կը մնան իրենց ֆրանսացիութեան իրաւունքներուն մէջ և ի գիտութիւն ամենքին պաշտօնապէս հրատարակութեան կը տրուին իրենց անուններ Ֆրանսայի պաշտօնաթերթին (Journal Officiel) մէջ։

Այդ, վերոյիշեալ պայմաններուն տակ դանուող և ֆրանսացիութեան մէջ վերահաստատուած անձերի անուանացանկը Journal Officielէն արտատպուած լինելով տեղական ֆրանսերէն օրաթերթերուն մէջ, մենք ալ անկէ կը քաղենք այն թիւրքահպատակ Հայերի անունները որոնք պատերազմէն քիչ առաջ ֆրանսական երկրացի (citoyen français կամ մեր թիւրքիոյ Հայերի հակացողութեամբ՝ ֆրանսահպատակ) եղած էին և կառավարութիւնը գնահատելով անոնց արժանիքները, որոշած է այժմ ևս պահել անոնց ֆրանսացիութեան իրաւունքը։

Ալեքսանեան Ա.ըշակունի, նաւազ (navigateur), ծնած Կ.պօլիս 1881 յունիս 25ին. կը բնակի Մարսէյլի մէջ կրան Րիւ, թիւ 80. բնիկ եղած (naturalisé) 1913 օգոստոս 28ին։ Քսանհինգ տարիէ ի վեր Ֆրանսա եկած է, ամուսնացած՝ Ֆրանսուհիի մը հետ, հինգ տարի զինուորութիւն ըրած՝ օտարազգիներու լեգէոնին (légion étrangère) մէջ և այժմ պատերազմին դնացած է։

Սահակ Գեան Յովհաննէս, վաճառական, ծնած Էրզրում (Թիւրքիա) 1864 օգոստոս 23ին. կը բնակի Մարսէյլի մէջ Պուլվար Լուի Սալվատոր, թիւ 7 (*). բնիկ եղած 1913 փետրվար 10ին։ Տանեվինը տարիէ

(*) Այժմեան բնակարանն է Գուր Լիէօ, թիւ 23. իսկ վաճառատունն է Boulevard Louis Salvator, N. 1։ Խմբ.

ի վեր Ֆրանսա կը բնակի. 3 զաւակ ունի ֆրանսական երկրացի։ Ազգային տեսակէտով իր ունեցած վարմունքի վրայ լաւ տեղեկութիւններ առնուած են։

Ջամարեան Սոֆի, կին Սահաթճեանի, ծնած Կ.պոլիս 1872 հոկտեմբեր 29ին. կը բնակի միևնոյն հասցէն. բնիկ եղած՝ միևնոյն թուականին։ Ազգային տեսակէտով իր վարմունքի վրայ լաւ տեղեկութիւններ առնուած են։

ՄԵԾ ՀՐԴԵՀ Կ.ՊՕԼՍԻ ՄԷՋ

Յուլիս 26ի երկուշաբթի երեկոյ սոսկալի հրդեհ մը ծագած է փէրուզի և Ֆըներտղլըի թաղերին մէջ։ 2.800 տուն հրդեհին զոհ դնացած են։ Երեսփոխանական ժողովի պալատը այրուած է։ Բիչ է մնացեր որ գերմանական հիւանդանոցն ալ այրէր. մանուկներին յատկացած յարկաբաժինը կրակ առեր է արդէն, բայց կրակը են վերջապէս ազատին առջևն առնել։

ԻՏԱԼԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՅԱՆԴԻՊ ՄԱՐԴԵՐՈՒ ԹԻՒԱԿԱՆՆԵՐԸ

Իտալական կառավարութիւնը Կ.պոլսի իր դեսպան Տ. կարօնիի միջոցով խիստ բողոքագիր մը ուղարկած է Բ. Դրան, Թիւրքիոյ մէջ իտալահպատակներուն վրայ գործադրուած ճնշումներուն և արդելքներուն դէմ։ Ապացոյցներ գտնուած են նաև որ Բ.Դուռը, Լօզանի խաղաղական դաշնագրին հակառակ, կաշխատի գրգռութիւններ յարուցանել Սիրենաիկի Արաբներուն մէջ իտալիոյ դէմ։ Իտալիոյ և Թիւրքիոյ ալ իրար հետ պատերազմի բռնուիլը մօտալուտ կերևի։

ՄԻԴԻԼԼԻՆԻ ԳՐԱՒՈՒՄԸ

Անգլիական կառավարութիւնը պաշտօնապէս հաղորդեց յոյն կառավարութեան թէ դաշնակից տէրութիւնները Միդիլլէն (Միտիլլի) կզղզին առժամապէս պիտի գրաւեն միևնոյն զինուորական պատճառներով որով գրաւեցին Լէմնոսը։ Անգլիոյ ծանուցագիրը, բարեկամական ոճով գրուած, կապահովէ որ Անգլիան և դաշնակիցները պիտի յարգեն Յունաստանի վեհապետական իրաւունքները, և կը յարէ որ անմիջապէս երբ դադրին կզղզին գրաւումը հարկադրող բացառիկ զինուորական պատճառները, դաշնակիցները պիտի փութան հեռանալ անկէ։

«ՄԱՐՍԷՅԷԶ»Ի ՀԵՂԻՆԱԿԻ ԱՁԻՆՆԵՐԻՆ·

ԷՆՎԱԼԻՏ ՓՈԽԱԴՐՈՒԵԼՈՒՆ ԱՌԹՈՎ Տ· ՓՈԽԱՆՑՈՒԱԾԻ ԽՕՍԱՑ ՁԱՌԸ

(Շար· Ի 52րդ Թուէն եւ վերջ)

Եւ վրէժխնդիր պատմութիւնը պիտի ըսէ նոյնպէս Շացեալը։ Անգլիան եղած առաջարկութիւնների խայտառակութիւնը և ստորնութիւնը և արհամարանքով մերժուիլը բրիտանական պատասխանգրութենէն, Պէլժիդի չէզոքութեան չարաչար բռնաբարուիլը, ամենէն վաւերական և նուիրական դաշնագրութիւնների պատռուիլը իբրև «թղթի քուրջեր», իրենց անցած երկիրների մէջ անպաշտպան բնակիչները սարսափեցնելու համար ամենէն բարբարոս միջոցների գործադրուիլը, գիտութիւնը խժդժութեան և վայրենութեան ի սպաս դրուելով անպատուուիլը։

Մեզնէ իւրաքանչիւրը, Տիարներ, կըրնայ մտքի կատարեալ յստակութեամբ վերակոչել իր յիշողութիւնները և հարցաքննել իր խղճմտանքը։ Ոչ մէկ ժամանակ անիրաւ չենք գտնուած արտասանելու բառ մը կամ ցոյց տալու դիրք մը որ կարենար ցրուել պատերազմի սպառնալիքները, եթէ եւրոպական խաղաղութեան դէմ նքման ոճիր մը երկար ժամանակներէ ի վեր փափաքուած և պատրաստուած չլիներ մեր անողոք թշնամիներէն։ Մենք անմեղ զոհերն եղած ենք ամենէն աւելի բիրտ և հմտօրէն կանխամտածուած յարձակումին։ Բայց երբ մեզ կը տեսնեն ակամայ սուրը քաշած, իրաւունքը չունինք, Տիարներ, զայն վերադարձնելու իր պատեանը այն օրէն առաջ երբ մեր մեռելների վրէժը լուծած պիտի լինինք և երբ դաշնակիցների միասին յաղթանակը պիտի թոյլատրէ վերանորոգել մեր աւերակները, վերաշինել ամբողջական Ֆրանսան և զմեզ պատրաստել ապրուելէս գրգռութիւնների պարբերական վերադարձին դէմ։

Ի՞նչ պիտի լինէր վաղը, եթէ կարելի լինէր որ կաղ հաշտութիւն մը մեր քայքայուած քաղաքների փլատակներուն վրայ դար նստիլ չնչասպառ։ Ամէնախիտ նոր դաշնագրութիւն մը պիտի դրուէր մեր յոդնած ուսերուն վրայ և մենք պիտի իյնայինք մշտնջենապէս մեր թշնամիների քաղաքական, բարոյական և տնտեսական հպատակութեան ներքև։ Ֆրանսայինները, արուեստագէտ, հողագործ և գործաւոր, նշանակ պիտի դառնային յաղթական մըրցակիցներին, և խանարհած Ֆրանսան իր իսկ վհատութեան և արհամարհանքին մէջ պիտի ընկճուէր։

Ո՛վ ուրեմն պիտի կրնար յապաղիլ մըննալ այսպիսի տեսութիւնների մէջ։ Ո՛վ ուրեմն պիտի համարձակէր այս նախատինքն ընել հանրային ողջմտութեան և ազգային հեռատեսութեան։ Զկայ մէկը մեր զինուորներէն, չկայ քաղաքացի մը, չկայ Ֆրանսայի կին մը միայն որ չհասկընայ յստակօրէն թէ մեր ցեղի ամբողջ ապագան, և ոչ միայն մեր պատիւը՝ այլ անոր պահպանութիւնն ալ կախուած են այս անողոք պատերազմի ծանր վայրկեաններէն։

Յաղթելու կամքը ունինք։ Ունինք նաև յաղթելու հաւատիքը։ Վստահութիւն ունինք մեր և մեր դաշնակիցներուն ոյժին վրայ։ Ինչպէս վստահութիւն ունինք մեր իրաւունքին վրայ։ Ո՛չ, ո՛չ, թող մեր թշնամիները չխաբուին այս մասին։ Խախուտ խաղաղութիւն մը, կրճատուած պատերազմի մը և ո՛չ աւելի ահռելի պատերազմի մը միջև մտատանջ և խարուսիկ զինադադար մը ստորագրելու համար չէ, վաղը նոր յարձակումների և մահացու վտանգների ենթարկուելու համար չէ որ ամբողջ Ֆրանսան ոտքի է կանգնած այժմ Մարսէյէզի առնական չեչտերէն սարսռագին։

Հայրենիքին իր իրաւունքներէ հրաժարուիլը ստատատելու համար չէ որ բոլոր սերունդները իրար մօտհնալով կազմած են հերոսների բանակ մը, որ ամէն օր աւելի բիրտ և համարձակ կերպ